

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/38**

ք. Երևան

«13» 05 2020թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տիգրան Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ -ն ի դեմս տնօրեն Գեվորգ Գեվորգյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

## 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 300000 ( Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 28 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

#### 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

##### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ


ՀՀ Աժ աշխատակազմ  
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19  
ՀՎՀՀ 00008519  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011020089  
ՀՀ Աժ աշխատակազմի  
ղեկավար – գլխավոր քարտուղար՝  
Տիգրան Գալստյան



##### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ  
Իրավ. և գործ. հասցե՝ ՀՀ ք. Երևան 0056,  
Գայի պողոտա 14/3,  
ՀՎՀՀ՝ 00076315  
ՀՀ՝ 22046333 0153000 (AMD)  
Բանկ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն՝ Գևորգ Գևորգյան



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում նախող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1  
 « 13 » 05 2020թ. կերպով  
 ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/38 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Ծառայության		տեխնիկական բնութագրերը	չափանմուշի միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրեր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)					հասցեն	ժամկետը
1	50111130/1	Ավտոմեքենաների ընթացիկ տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ, այդ թվում 1 միևնույն ֆիրմային ընկերության Mercedes-Benz, Sprinter 515 CDI/: Առավել մանրամասն նկարագրերը ներկայացված են հավելված 1-ում:	դրամ	300000	1	ՀՀ ք. Երևան, Գալի պող. 14/3	Պայմանագրի ուժի մեջ մտնելու 31.12.2020թ.

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

ՀՀ ԱԺ աշխատակազմ  
 ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19  
 ՀՎՀՀ 00008519  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011020089  
 ՀՀ ԱԺ աշխատակազմի



ղեկավար – գլխավոր քարտուղար՝  
 Տիգրան Գալստյան

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ  
 Իրավ. և գործ. հասցե՝ ՀՀ ք. Երևան 0056,  
 Գալի պողոտա 14/3,  
 ՀՎՀՀ՝ 00076315  
 ՀՀ՝ 22046333 0153000 (AMD)  
 Բանկ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ



Տնօրեն՝ Գևորգ Գևորգյան

Ձեռքբերվող ծառայության նկարագիր*		Միիվաւորուա /Mercedes-Benz, Sprinter 515 CDI, 2017թ. արտադրության
N	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
	2	3
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը	ՀՀ Դրամ
	Բռնկման համակարգի ստուգում	15000
	Ստեղծման համակարգի ստուգում	12600
	Յուղման համակարգի ստուգում	7200
	<b>Արտացման համակարգի ստուգում</b>	
	Կցորդման համակարգի ստուգում	15000
	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	15000
	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	15000
	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	15000
	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	15000
0	Սոջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	15000
1	Սոջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	15000
2	Կրգելակային համակարգի աշխատանքի ստուգում	15000
3	ABS համակարգի ստուգում	15000
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	15000
5	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	15000
6	Թափքի վիճակի ստուգում	15000
7	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	15000
	<b>SU-1 ներառվող ծառայությունների անվանումը</b>	
8	Շարժիչի հանում տեղադրում	12000
9	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) ղեկարգում	81000

0	Լույսը կոնդիցիոների դեպքում	45000
1	Լույսը ԱՓՏ-ի դեպքում	81000
2	Շարժիչի վերականգնում	288000
3	Լույսը DOHC դեպքում	81000
4	Լույսը V6-ի դեպքում	72000
5	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում	28000
6	Բ/լիստերի կախարիչի հանում և տեղադրում	43200
7	Լույսը աջի համար (V6)	21600
8	Լույսը ձախի համար (V6)	21600
9	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	162000
0	Լույսը աջի համար (V6)	81000
1	Լույսը ձախի համար (V6)	81000
2	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	81000
3	Շարժիչի գլխիկի վերանորոգում	
4	Փականի խցուկի փոխարինում	126000
5	Լույսը V6-ի դեպքում	162000
6	Բաշխիչ լիստերի հանում և տեղադրում	82000
7	Լույսը V6-ի ձախի դեպքում	41000
8	Լույսը V6-ի աջի դեպքում	41000
9	Լույսը DOHC դեպքում	82000
0	Բաշխիչ լիստերի խցուկի փոխարինում	81000
1	Հրիչների փոխարինում SOHC	126000
2	Լույսը DOHC դեպքում	126000
3	Ատամնավոր փոկի փոխարինում	
4	Լույսը DOHC դեպքում	
5	Լույսը V6-ի դեպքում	
6	Ծնկաձև լիստերի արջակի խցուկի փոխարինում	90000

7	Նույնը կոնդիցիոնների դեպքում	
8	Նույնը DOHC դեպքում	90000
9	Նույնը կոնդիցիոնների դեպքում	
0	Նույնը V6-ի դեպքում	90000
1	Նույնը կոնդիցիոնների դեպքում	
2	Ծնվածն լիտեռի հետևի խցուկի փոխարինում	115200
3	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	
4	Մխոցային օղակների փոխարինում	280000
5	Նույնը DOHC դեպքում	280000
6	Նույնը V6-ի դեպքում	280000
7	Թափանիվի հանում և տեղադրում	126000
	<b>2 Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>	
8	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	7200
9	Յուղի պոմպի փոխարինում	162000
0	Նույնը DOHC դեպքում	162000
1	Նույնը V6-ի դեպքում	162000
2	Ղեկավարման բլոկի վերանորոգում	
3	Բռնկման կարգավորում	25000
4	CO կարգավորում	
5	Խարնարակի հանում և տեղադրում	
6	Խարնարակի վերանորոգում	
7	Օդի գտիչի փոխարինում	5400
8	Ինժեկտորի ֆորտունյանների փոխարինում	54000
9	Ինժեկտորի ֆորտունյանների մաքրում	
0	Բենզամոլիչի փոխարինում	97200
1	Վառելիքի գտիչի փոխարինում	10800
2	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	18000

3	Տրամյորի հանում և տեղադրում	
4	Տրամյորի վերանորոգում	
	<b>3. Սառեցման և արտաօճան համակարգ</b>	
5	Հովիարի փոկի հանում և տեղադրում	18000
6	Հովիարի հանում և տեղադրում	36000
7	Ռադիատորի հանում և տեղադրում	36000
8	Նույնը կոնդիցիոների դեպքում	36000
9	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	36000
0	<b>Ռադիատորի վերանորոգում</b>	
1	Թերմոստատի փոխարինում	28800
2	Ջրի պոմպի փոխարինում	30600
3	Նույնը DOHC և V-6 դեպքում	30600
4	Նույնը կոնդիցիոների դեպքում	30600
5	<b>Ջրի պոմպի վերանորոգում</b>	
6	Նույնը DOHC դեպքում	
7	Նույնը կոնդիցիոների դեպքում	
8	Ընդարձակող բաքի փոխարինում	9000
9	Խլարարի հանում և տեղադրում	45000
0	Նույնը DOHC դեպքում	45000
1	Ռադիատորի փոքրակի հանում և տեղադրում	18000
	<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>	
2	Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում	18000
3	Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում	
4	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	
5	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	
6	Կցորդման ճուպակի հանում և տեղադրում	
7	ՓՏ-ի հանում և տեղադրում	45000

8	ՓՏ-ի վերանորոգում	90000
9	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	90000
00	ՓՏ-ի պայտյանի հանում և տեղադրում	96000
01	Վազբաջապիի շարժաբեր փոխարինում	36000
02	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	126000
03	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	160000
04	Նույնը V6-ի համար	160000
05	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	79200
06	Նույնը V6-ի համար	79200
07	ԱՓՏ-ի վերանորոգում	180000
08	Նույնը V6-ի համար	180000
09	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	14400
	<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեն</b>	
10	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	75000
11	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	115000
12	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	78000
13	Կարդանային լիսենի հանում և տեղադրում	36000
14	Կարդանային լիսենի հանում և տեղադրում, վերանորոգումով	
15	Կարդանային լիսենի խաչուկի հանում և տեղադրում	75000
16	Կարդանային լիսենի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	48000
	<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>	
17	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	63000
18	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	120000
19	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	120000
20	Առջևի կամ հետևի կամրջակի կիսատնու հանում և տեղադրում	75000
21	Կիսատնու առանցքակալի փոխարինում	75000
	<b>7. Կախոց</b>	
	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	150000

22			
23	Տրավերսի հանում և տեղադրում		75000
24	Զախ կամ այց հողակապի հանում և տեղադրում		18000
25	Անվակունդի առանցքակապի փոխարինում		36000
26	Նույնը հետին տանող ա/մ-երի համար		36000
27	Հետևի անվակունդի առանցքակապի փոխարինում		36000
28	Նույնը հետին տանող ա/մ-երի համար		36000
29	Զախ կամ այց հողակապի խցովների փոխարինում		45000
30	Զախ կամ այց հողակապի առանցքակապների փոխարինում		45000
31	Տնցանդմիջի թասակի փոխարինում		
32	Զսպանակի հանում և տեղադրում		18000
33	Զսպակի հանում և տեղադրում		54000
34	Զսպակի վրանների փոխարինում		
35	Առջևի ցնցանդմիջի հանում և տեղադրում		18000
36	Ներքևի լծակի վրանների տեղադրում		36000
37	Ներքևի լծակի վրանների փոխարինում		36000
38	Առջևի այց կամ ծախ ձգանքի հանում և տեղադրում		18000
39	Միջին ձգանքի հանում և տեղադրում		
40	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում		
41	Վերևի լծակի հանում և տեղադրում		
42	Վերևի լծակի վրանների փոխարինում		
43	Գնդե հողակապերի փոխարինում		36000
44	Ծայրականների հանում և տեղադրում		14400
45	Առջևի կայունարարի հանում և տեղադրում		14400
46	Առջևի կայունարարի վրանների փոխարինում		18000
47	Առջևի կայունարարի առջևի վրանների փոխարինում		18000
48	Հետևի գապանակի փոխարինում		54000

49	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	14400
50	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	
51	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	
52	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	18000
53	Հետևի անկյունագծային թևակի հանում և տեղադրում	
54	Անկյունագծային թևակի վրանների փոխարինում	
55	Անվաքացքի կարգավորում	
56	Զորնան ածխատանքներ 1 քառ.սմ համար	
	<b>8. Ղեկային մեխանիզմ</b>	
57	Ղեկային կայունի հանում և տեղադրում	43200
58	Նույնը V6-ի համար	43200
59	Ղեկային կայունի վերանորոգում	
60	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վրանների փոխարինում	
61	ՂԿ-ի հորակալերի հանում և տեղադրում	
62	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	21600
63	Նույնը DOHC դեպքում	21600
64	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	14400
65	Նույնը DOHC դեպքում	14400
66	Հիդրոուժեղարարի փոխարակի հանում և տեղադրում	18000
67	Նույնը DOHC դեպքում	18000
68	Նույն կոդիցիոնների դեպքում	18000
69	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	
70	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	
	<b>9. Արգելակային համակարգ</b>	
71	Գլխ. գլանի հանում և տեղադրում	42000
72	Գլխ. գլանի վերանորոգում	
73	Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում	18000
	Բանվ. գլանի հանում և տեղադրում	36000

74			
75	Բանձ. գլանի վերանորոգում		
76	Արգելակային համակարգի օդահանում	18000	
77	Առջևի ստապորտի հանում և տեղադրում	7200	
78	<Ետևի ստապորտի հանում և տեղադրում	7200	
79	Առջևի ստապորտի վերանորոգում		
80	<Ետևի ստապորտի վերանորոգում		
81	Արգելակային փոխարկի փոխարինում	7200	
82	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	18000	
83	<Ետևի սկավառակային կոճղակների փոխարինում	18000	
84	<Ետևի կոճղակների փոխարինում	18000	
85	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	18000	
86	<Ետևի արգելակային սկավառակի փոխարինում	18000	
87	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	12600	
88	ABS-ի հանում և տեղադրում	18000	
89	ABS-ի վերանորոգում		
90	Ձեռքի արգելակի ճուպանի հանում և տեղադրում	18000	
91	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում		
	<b>10. Էլեկտրասարքավորում</b>		
92	Էլեկտրասարքավորման վերանորոգում	25000	
93	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	18000	
94	Գններատրոի հանում և տեղադրում	27000	
95	Նույնը V6-ի դեպքում	27000	
96	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	27000	
97	Գններատրոի վերանորոգում	45000	
98	Մեկնարկիչի հանում և տեղադրում	27000	
99	Մեկնարկիչի վերանորոգում	27000	
	Առջևի լապտերի հանում և տեղադրում	25200	

00			
01	Հետևի լապտերի հանում և տեղադրում		25200
02	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում		18000
03	Վազբազապի հանում և տեղադրում		9000
04	Վազբազապի ճոպանի հանում և տեղադրում		9000
05	Սարքերի պանելի հանում և տեղադրում		9000
06	Արագազապի հանում և տեղադրում		9000
07	Ազդանշանի հանում և տեղադրում		3600
08	Ապակեվակցիչի շարժիչի հանում և տեղադրում		3600
09	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում		14400
10	Ազդանշանային համակարգի տեղադրում		
11	Մագնիստոլային տեղադրում		
12	Վառոցքային լարերի հանում և տեղադրում		36000
13	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում		25000
14	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում		75000
15	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում		75000
16	Էլեկտրական տվիչների փոխարինում		7200
17	Էլեկտրական անջատիչների փոխարինում		7200
18	Վառոցքի մոմերի փոխարինում		18000
19	Կոնդիցիոների լիցքավորում		30000
20	Կոնդիցիոների վերանորոգում		
<b>11. Այլ ծառայություններ</b>			
21	Ավտոմեքենայի թափքի հոլկում և ներկում, գին 1 քառ.դմ-ի համար		80000 /1կտորը/
22	Ավտոմեքենայի լիցքավորում		15000
23	Անիվի հանում և տեղադրում		1000
24	Անվաղեղի վերանորոգում		5000
25	Անիվի բալանսավորում		15000
	Անիվի վալց		

26			
27	CO-գործան աշխատանքներ, գին 1 բառ.սմ-ի համար		
28	Խառատային աշխատանքներ, գին 1ժ համար		
29	Փականագործի աշխատանքներ, գին 1ժ համար		18000
30	Քարշակի ծառայություն գին 1լսմ, համար		
	<b>SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները</b>		
	<b>1. Շարժիչ</b>		
	Շարժիչի բլոկ		2.068.900
	Շարժիչի գլխիկ		167.900
	Բարձրիկ		50.700*2
	Շարժիչի գլխակի միջադիր		56600
	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ		
	Շարժիչի բաշխիչ լիսեռ		1.390.200
	Շարժիչի փական դուրս մղող		
	Շարժիչի փական ներս մղող		
	Շարժիչի փականի խցուկ		
0	Ծնկածն լիսեռ		311200*2
1	Ծնկածն լիսեռի խցուկ առջևի		17800
2	Ծնկածն լիսեռի խցուկ հետև		25500
3	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ		11300*2
4	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ		15900, 12000
5	Հենակային տափուղակ		189400
6	Մխոց		377900
7	Մխոցային օղակներ		
8	Ատամանիկ		770900
9	Ատամանավոր փոխ		
0	Շղթա		214700
1	Հիդրոձգան		74400
2	Հրիչ		

3	Հրիդրոիրիչ	9300
4	Բանշակ	7800
5	Հանգստարար	6100
6	Թավաձավ	
7	Թավաձավի պտակ	
8	Խցուկ բաշխիչ լիտերի	
9	Շնկիկ	43600
0	Շարժաթև	141600
1	Կարտերի միջադիր	46700
2	Միջադիր	
	<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>	
3	Ցուղ շարժիչի հանքային, 1լիտր	17900
4	Ցուղ շարժիչի կիսասինթետիկ, 1լիտր	22200
5	Ցուղ շարժիչի պինթետիկ, 1լիտր	24000
6	Ցուղի գտիչ	18900
7	Ցուղի պոմպ	288900
8	Ցուղի պոմպի շարժաբեր	
9	Ցուղի ուղիհատոր	116400
0	Ցուղի փողոցակ	
1	Ցուղի ծորակ	
2	Վառոցքի մոմ	47900
3	Բենզոլրաք	287700
4	Խառնարան	
5	Խառնարանի վերանորոգման հավաքածու	
6	Ինժեկտորի ֆորտունկա	395300
7	Վառելանյութի մոլիչ էլեկտրական	352100
8	Վառելանյութի մոլիչ մեխանիկական	

9	Վատելանյութի գտիչ	76600
0	Վատելանյութի գտիչի նուրբ մաքրման	
1	Վատելանյութի փոդրակ	
2	Աքսելերատորի ճուպան	
3	Օդի գտիչ	24800
4	Ջերմաստիճանային տվիչ	18900
5	Յուղի տվիչ	91300
6	Բաշխիչ փնեռի տվիչ	34200
7	Օդի ծախսի տվիչ	351200
8	Արագաչափի տվիչ	
9	Հովիարի տվիչ	
0	Ջրի տվիչ	
1	Բենզոլբաքի տվիչ	
2	Մարման ընթացքի տվիչ	
3	Մարման ընթացքի տվիչ	
4	Ղեկավարման համակարգիչ	
5	Պարապլ ընթացքի տվիչ	
6	Դրոնելային փականի տվիչ	
7	Թթվածնի տվիչ	
	<b>3. Սարքեցման և արտածման համակարգ</b>	
8	Հովիարի փոկ	27200
9	Հովիար	136100
0	Բաղիատոր	263200
1	Ընդարձակող բաք	50000
2	Բաղիատորի փոդրակ	
3	Թերմոստատ	64600
4	Ջրի պոմպի թևակ	21000, 19500

5	Ջրի պոմպի առանցքակալ	74800
6	Ջրի պոմպի թևակ	19500
7	Սառեցման հերուկ 1 լիտր	3400
8	Ջրի պոմպի տննանիվ	
9	Հողովակ	
0	Փոկ	
1	Փոկ կրողիցիոների	
2	Ծորակ	
3	Խլարարի ներդիր	5100, 12000
4	Խլարարի կախոց	
5	Կրոնշտեյն	12700
6	Անուր (համուտ)	14300, 13000
7	Խլարար	1620100, 250000
8	Ռերոնատոր	
9	Վառարանի ուղիատոր	94800
	<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>	
0	Կցորդանոց բանվորական գլան	
1	Կցորդանոց գլխավոր գլան	83800
2	Կցորդանոց գլանի վերանորոգման հավաքածու	
3	Կցորդանոց տանող սկավառակ	244100
4	Կցորդանոց տարվող սկավառակ	473000
5	Կցորդանոց առանցքակալ	
6	Կցորդանոց փողորակ	
7	Փոխանցման տուփ	4273800
8	ՓՏ-ի առջևի խցուկ	
9	ՓՏ-ի հետևի խցուկ	19200
00	ՓՏ-ի առանցքակալ	47400

01	ՓՏ-ի առաջնային լիսեռ	
02	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	
03	ՓՏ-ի եղանակ	
04	ՓՏ-ի ատամնանիվ	
05	Համաժամիչ	
06	Մուֆտ	
07	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	
08	ԱՓՏ-ի գտիչ	
09	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	
10	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	
11	Տրանսմիսիոն յուղ, 1 լիտր	
12	ԱՓՏ յուղ, 1 լիտր	
13	ՓՏ-ի առաջնային լիսեռ	
14	Հերմետիկ	
	<b>5. Բաշխիչ տուփ, կարրանային լիսեռ</b>	
15	Բաշխիչ տուփ	
16	Բաշխիչ տուփի խցով	
17	Բաշխիչ տուփի առանցքակալ	
18	Բաշխիչ տուփի ատամնանիվ	
19	Բաշխիչ տուփի լիսեռ	
20	Կարրանային լիսեռ	1037500, 551600
21	Էլաստիկ մուֆտ	
22	Կարրանային լիսեռի միջանկյալ հենակ	176100
23	Կարրանային լիսեռի խաչուկ	
	<b>6. Առջևի կամ հետևի կամրջակներ</b>	
24	հետևի կամ առջևի կամրջակ	
25	Ռետրուկտոր	
	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	

26			
27	Դիֆֆերենցիալ		987700
28	Դիֆֆերենցիալի աստեղիտ		
29	Տանող ատամնանիվի խցուկ		16300
30	Տանող ատամնանիվի ատանցքակալ		
31	Դիֆֆերենցիալի ատանցքակալ		23200
32	Կիսասունի		381200*2
33	Կիսասունու ատանցքակալ		55700
34	Կիսասունու միջադիր		4700
35	Կիսասունու խցուկ		23900
36	Կարգավորիչ տափողակ		5100
	<b>7. Կախոց</b>		
37	Տրավերս		738500
38	Կլունշտեյն		
39	Ձախ կամ աջ հողակալ		
40	Ձախ կամ աջ հողակալի փոշեթիկոց		
41	Մեվակունդ		305500
42	Մեվակուղի խցուկ		
43	Մեվակունդի ներքին ատանցքակալ		
44	Մեվակուղի արտաքին ատանցքակալ		
45	Հետևի անվակունդի ներքին ատանցքակալ		104000
46	Հետևի անվակունդի արտաքին ատանցքակալ		55700
47	Ձախ կամ աջ հողակալի խցուկ		
48	Հարվածամեղմիչի թասակ		47900
49	Ջսպանակ		
50	Սոցևի հարվածամեղմիչ		223400
51	Հարվածամեղմիչի փոշեթիկոց		6400
	Հարվածամեղմիչի վրան		

52			
53	Ներքևի թակ		287600*2
54	Ներքևի թակի վրան		10700*2
55	Վերևի թակ		
56	Վերևի թակի վրան		
57	Գնդե հողակալ		
58	Առջևի կայունարար		123600
59	Առջևի կայունարարի վրան		10000
60	Առջևի կայունարարի առջևի վրան		
61	Հետևի գապանակ		
62	Հետևի ցնցամեղիչ		104700
63	Հետևի մետաղաձող (շտանգա)		336100
64	Հետևի մետաղաձող (շտանգա) վրան		21200, 17600
65	Հետևի անկյունաձալին թակ		
66	Անկյունաձալին թակի վրան		
67	Հսպակ (ոնստորա)		260300
68	Հսպակի վրան		16100, 8600
69	Հսպակի միջադիր		
70	Հսպակի բռնիչ		
71	Աջ կամ ձախ ձգան		
72	Ծայրակալ		
73	ձգան մեջտեղի		
74	Անվահեժ		
	<b>8. Ղեկային մեխանիզմ</b>		
75	Ղեկային կայուն		1616700
76	Ղեկային կայունի առանցքակալ		138200
77	Ղեկային կայունի խաչուկ		36400
	Հիդրոստեղարար		

78			
79	Հիդրոուժեղարարի փոկ		
80	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ		
81	Հիդրոուժեղարարի պոմպ	520300	
82	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ		
83	Ղեկային ծող		
84	Ղեկային ծողի ծայրակալ	109900, 61900	
85	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	13700	
86	Շոճանակ		
87	Շոճանակի վռան		
	<b>9. Արգելակային համակարգ</b>		
88	Գլխ. գլան	235800	
89	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ		
90	Վակումային ուժեղարար	218700	
91	Բանվ. գլան		
92	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ		
93	Արգելակային փոխարակ		
94	Սուպպորտի ուղղորդիչ	331900, 343600	
95	Սուպպորտի մոնժետ	331900, 343600	
96	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	93500, 6900	
97	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	102900, 6900	
98	հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	144600	
99	Առջևի արգելակային սկավառակ	81300	
00	Հետևի արգելակային սկավառակ	86700	
01	Ջերդի արգելակային ճուպան	23600, 29100	
02	ABS-ի տվիչ	101800*3	
03	Արգելակային հեղուկ, 800գրամ	10200	
	Արգելակային հեղուկ, 800գրամ		

04			
05	Ձեռքի արժեքավային ճույն		
	10. Էլեկտրասարքավորում		
06	Գեներատոր	770800	
07	Գեներատորի դիրոլային կանոցակ		
08	Գեներատորի ուել		
09	Գեներատորի առանցքակալ		
10	Ստարտեր	617500	
11	Ստարերի ուել		
12	Ստարտերի ածուխ		
13	Բենդերս		
14	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	43000	
15	Առջևի լապտեր	282900*2	
16	Առջևի թարթիչ	27900, 2800	
17	Հետևի լապտեր	100300*2	
18	Հետևի թարթիչ	3600*2	
19	Արժեքավային լապտեր	1900*2	
20	Լամպ		
21	Էլեկտրական անջատիչ		
22	Էլեկտրական տվիչ		
23	Էլեկտրական չափիչ սարք		
24	Բոնկման կողպեք	431400	
25	Էլեկտրալարերի գլխավոր խումբ	511400	
26	Էլեկտրալարերի երկրորդային խումբ		
27	Վառոցքային լարերի խումբ	24200	
28	Վառոցքի մոլի ծայրակալ		
29	Վազբաչափ		
	Վազբաչափի ճույն		

30		
31	Արագաչափ	508600
32	Ազդանշան	32900
33	Ապակեկլացիչ	48500
34	Ապակեկլացիչի շարժիչ	41200
35	Դռների վենտորնական փական	
36	Ազդանշանային համակարգ	
37	Մազնիստոլա	322700
38	Էլեկտրաամբարձիչ	123600
39	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	
40	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**


ՀՀ ԱԺ աշխատակազմ  
 ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19  
 ՀՎՀՀ 00008519  
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
 Հ/Հ 900011020089  
 ՀՀ ԱԺ աշխատակազմի  
 ղեկավար - ~~գլխավոր քարտուղար՝~~  
 Տիգրան Գալստյան



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ  
 Իրավ. և գործ. հասցե՝ ՀՀ ք. Երևան 0056,  
 Գայի պողոտա 14/3,  
 ՀՎՀՀ՝ 00076315  
 ՀՀ՝ 22046333 0153000 (AMD)  
 Բանկ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն՝ Գևորգ Գևորգյան





Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը

գտնվելու վայրը

հհ \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

ազգանուն, անուն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

### ԿՈՂՄԵՐԸ

#### Հանձնեց

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն

#### Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն